ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում
Հետազոտական աշխատանք
«Հայոց լեզու և գրականություն» առարկայից

Թեմա – Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների ուսուցումը 5-րդ դաս.

Կատարող – Օ. Վարդանյան

Ղեկավար – Աշոտ Գալստյան, բգդ պրոֆ.

ԵՐԵՎԱՆ 2023

Ներածություն

Երևի մեզանում դժվար գտնվի մեկը, որ Թումանյանի «սրի» տակով անցած չլինի. ինչպիսի կրթություն ստացած լինես, ինչ դպրոց ու համալսարան ավարտած լինես, երբ հետ ես նայում անցածդ ճանապարհին, քեզ անպայման հանդիպում է Թումանյանը՝ իր լուսավոր, խորաթափանց հայացքով, կարծես ասում է՝ ճի՞շտ ես կարդացել, ճի՞շտ ես հասկացել գրվածքներս:

Ոչ ոք չի ժխտի նաև այն, որ Թումանյանը, թերևս, մեր ամենից սիրված և ուսումնասիրված գրողներից է. գրականագիտական աշխատություններ կան, հուշեր, զրույցներ, որոնց մեջ տեսնում ես մեծ գրողին, քաղաքացուն, համամարդկային արժեքներ կրող մարդուն:

Եվ ով, եթե ոչ Թումանյանը պետք է լինի մեր ուղեկիցը՝ սկսած ուսումնասիրության առաջին վայրկյանից:

Ով, եթե ոչ Թումանյանը մեր ձեռքը բռնած պիտի տանի դեպի վեհը, բարին, ճշմարիտը, իր իմաստուն պարզությամբ ցույց տա մեր առավելություններն ու թերությունները, մեզ հետ ծիծաղի, մեզ հետ տխրի, մեզ ուղեկցի դեպի լույսի ու հույսի հայրենիքը:

Այսօր՝ 21-րդ դարում, այս հարափոփոխ թվայնացված աշխարհում պիտի գտնել ճիշտ ուղին երեխային լիարժեք ազգային կրթությունն տալու, ազգայինից համամարդկայինին հասցնելու համար: Եվ դպրոցը այս մեծ առավելությունը իրագործելու համար երկու հզոր գործիք ունի՝ մայրենի լեզուն և ճիշտ գրականությունը:

Մեր ուսումնառության թեման Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթն է և «Գելը» պատմվածքը: Թվում է՝ 5-րդ դասարանում երեխան խորությամբ չի կարող ընկալել «անխելք մարդը», բայց մեր նպատակը այդ խորությունը հենց հիմա հասու դարձնելը չէ, այլ ինքնաճանաչման, սեփական արարքները գնահատելու կարողունակության զարգացում, իսկ «Գելը» պատմվածքը մեզ մոտեցնում է գյուղին, գյուղական կյանքին, մոտեցնում է բնությանը, ինչը շատ կարևոր է, հատկապես քաղաքային միջավայրում

ապրող երեխայի համար: Այս ամենը, ի վերջո, դարձյալ տանում է ինքնաճանաչողության, մարդուն բնության հարաբերությունների ներդաշնակեցման, որովհետև գյուղը հայ Գյուղն է, գործող անձիք՝ հայ գյուղացիներ, բնությունը՝ հայկական, և անգամ գայլը՝ մերը, մեր բնաշխարհին բնորոշ:

«Մենք պետք է ափսոսանք, խնայենք, գուրգուրենք մեր ունեցած-չունեցածը, մեր օդն ու ջուրը, մեր լեզուն, ժամանակը, և մեզ, եթե ուզում ենք լիարժեք ազգ ու հասարակություն լինել, արժանի լինել մեր փոքր ու սքանչելի հայրենիքին: Այլապես ոչինչ դուրս չի գա»

Լ. Գախվերդյան

«Թումանյանը և իր ժամանակը»

I մաս

«Հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եվ շնորհքը հենց էդ պատմելու մեջ է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ ոճով ու ինչպես պատմեն, որ և՛ գեղեցիկ դուրս գա, և՛ ժողովրդականի համն ու հոտը չկորցնի»:

Հովհ. Թումանյան

Հեքիաթի այս փայլուն բնորոշումը կարծես հեքիաթի (և ոչ միայն) ուսուցման ուղենիշ է յուրաքանչյուր ուսոցչի համար, մի յուրատեսակ դասապլան, քայլերի հաջորդականություն, որը կօգնի ուսուցչին նյութը ճիշտ մատուցել երեխային («շնորհքը հենց էդ պատմելու մեջ է»), կօգնի երեխայի ուշադրությունը սևեռել կարևորի վրա («ինչը դուրս գցեն, ինչը պահեն»), կօգնի սովորեցնել գեղեցիկ խոսք կառուցել ժողովրդականի համ ու հոտով:

«Անխելք մարդը» Թումանյանի մշակած առաջին հեքիաթն է, որը հրատարակվել է 1894 թվականին: Ըստ հետազոտողների Թումանյանը ուսումնասիրել է հայկական, վրացական, Կովկասի այլ ժողովուրդների միջավայրում լայնորեն տարածված տասնյակ տարբերակներ, բյուրեղացրել և մեզ է հանձնել աշխույժ, թեթև, սրամիտ մի պատմություն բախտ որոնող մարդու մասին:

Բոլոր հեքիաթներն ունեն հզոր դաստիարակչական ուժ, բայց Թումանյանի հեքիաթները դաստիարակում են առանց բարոյախրատական ճառերի, և դա է մեծ գրողին սիրելու, կապվելու, նրանից սովորելու ամենամեծ գաղտնիքը: Դու էլ չես հասկանում, թե ինչպես ես հայտնվում նրահեքիաթում, նրա հերոսների միջավայրում. այնքան հատուկ է սյուժետային գիծը, այնքան «համով» են զարգանում իրադարձությունները, այնքան պարզ է ամեն ինչ: Բայց այդ թվում պարզության խորքը ընկալելի դարձնելու համար մեծ աշխատանք է պետք:

5-րդ դասարանի «Մայրենի» դասագրքի հեղինակներ Աշոտ Գալստյանը և Թամարա Թովմասյանը իսկապես մեծ աշխատանք են կատարել, որպեսզի նյութը

երեխան ընկալի առավելագույնս, բայց նաև ուսուցիչը պիտի կարողանա ճիշտ օգտվել դասագրքի ընձեռած հնարավորություններից:

Նախ պետք է որքան հնարավոր է արտահայտիչ կարդալ՝ պահպանելով ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ առոգանությունը: Երկրորդ անգամ ընթերցելիս երեխաները դուրս կգրեն այն բառերը, արտահայտությունները, որոնք չեն հասկացել:

դարդ

ճար

ապսպրել

մեկին ավար չանես, մյուսին՝ խավար

Բառային աշխատանքը և բառի հետ աշխատանքը շատ կարևոր է երեխայի աշխարհընկալումը լայնացնելու, ազգային մտածելակերպի, ազատ, ներդաշնակ արտահայտվելու, ճիշտ խոսք կառուցելու տեսանկյունից, իսկ բարբառային բառերն ու արտահայտությունները ընդլայնում են երեխայի մտահորիզոնը, թույլ են տալիս ավելի լավ ճանաչել երևույթը: Մեծ բանաստեղծի դուստրը հիշում է, որ ամռանը երբ գնում էին Դսեղ, «հայրը խորհուրդ էր տալիս, որ գյուղացիների հետ զրույց անենք, լսենք նրանց խոսքը, գյուղական ոճով ու դարձվածքերով հարստացնենք մեր լեզուն»:

Ն. Թումանյան

«Հուշեր և զրույցներ»

Իզուր չէ, որ Թումանյանը իր զավակներին հենց այս խորհուրդն էր տալիս:

Ոչինչ այնքան չի զարգացնում երեխայի մտածողությունն ու խոսքը, որքան խաղը բառերի հնչյունների հետ (վ. 4, 5):

3-րդ վարժությունը թույլ է տալիս զարկ տալ երևակայությանը, փոխել բառերը հականիշներով, հոմանիշներով ստանալ տարբեր մտքեր, զարմանալ, թե ինչպես կարող է մեկ բառը փոխել ողջ մտքի տրամաբանությունը, իսկ ինչպես գիտենք զարմանալը առաջ գնալու կարևորագույն հատկություններից մեկն է:

Հականիշների հետ աշխատանքը (վ.1) կարելի է զուգորդել նաև հոմանշային աշխատանքով, և որպեսզի ժամանակի առումով խնդիր չունենանք, կարելի է առաջնորդվել վերջին հատվածը.

հոմանիշ	հականիշ
սիրուն	
ուրախանալ	
սոված	
անխելք	
աղքատ	

Ընդհանրապես տարրական և միջին դասարաններում է, որ երեխային պետք է սովորեցնենք հասկանալով կարդալ: Երբեմն երեխաները կարդում են բառերը, առանց կետադրական և առոգանության նշանների: Այդ աշխատամքը և դրան զուգահեռ ուղղախոսական աշխատանքը պետք է անդադար տարվի, որպեսզի երեխան ամբողջությամբ ընկալի նյութը, կարողանա այն վերարտադրել:

Իհարկե, սոսկ վերարտադրությունը ժամանակի անտեղի վատնում է, որովհետև յուրաքանչյուր նյութ պիտի նպաստի անհրաժեշտ հմտությունների և ՀՊՉ-ով նախատեսված կարողունակությունների զարգացմանը (այս դեպքում՝ լեզվական և գրագիտության, ինքնաճանաչման և սոցիալական):

«Անխելք մարդը» հեքիաթը ոչ միայն ճիշտ կարդալու, այլ նաև բանավոր խոսքը զարգացնելու համար որոշակի նյութ է: Բանավոր խոսքը լեզվական կարողունակությունների՝ տեսականի անցումն է գործնականի: Հեքիաթը պատմելիս երեխաները կաշկանդված չեն ամեն բառ և արտահայտություն օգտագործել: Անտիկ աշխարհի մեծ մտածող Արիստոտելը սահմանել է «ասել այն, ինչ պետք է, չասել այն, ինչ պետք չէ, և ասել այնպես, ինչպես պետք է»:

Հեքիաթի ուսուցման այս փուլում շատ տեղին կլինի դերախաղը, հեքիաթի բեմադրությունը՝ ազատություն տալով երեխաների երևակայությանը՝ պարտադիր պայման դնելով, որ օգտագործեն բարբառային բառերն ու արտահայտությունները,

իրենց կողմից էլ ավելացնելով նոր արտահայտություններ ու բառեր: Կարելի է երեխաների տարբեր խմբերին տալ տարբեր հանձնարարություններ, օրինակ՝ 1-ին խումբը պատմում է գրական հայերենով, 2-րդը՝ նոր բարբառային բառեր և արտահայտություններ ավելացնելով, 3-րդը՝ երևանյան բարբառով, 4-րդը՝ նոր հերոսներ ավելացնի և այլն:

Տեքստային աշխատանքի մի քանի վարժություններ կարող են զուգորդվել բեմադրությունների հետ (հեքիաթին նոր ավարտ հորինիր (վ. 8), առաջարկիր նոր վերնագիր(վ. 4)):

Երբ երեխաները կներկայացնեն իրենց բեմադրությունները, շատ ավելի լավ կհասկանան և կըմբռնեն հերոսների արարքները, քանի որ հենց իրենք են խաղում, իրենց ընկալած ձևով են մատուցում: Վերջին փուլում արդեն կարելի է բնութագրել հերոսներին, մեկնաբանել նրանց արարքները, խոսել բախտի և խելքի մասին:

Դասագիրքը նաև հնարավորություն է տալիս QR ծրագրի միջոցով դիտել մուլտֆիլմը, գտնել նմանություններն ու տարբերությունները, լրացնել Վենի գծագիրը. նմանատիպ աշխատանքներ երեխաները շատ են սիրում:

և այս տեսակի աշխատանքները զարգացնում են և՛ տեսողական, և՛ լսողական հիշողությունը, թույլ են տալիս երեխային մտածել, երևակայել, համեմատել, ի վերջո, գտնել իր համար կարևոր մի ճշմարտություն, և ամենակարևորը կարծիքի ձևավորում, որը առանցքային է ապագա քաղաքացու, անհատի դաստիարակության գործում:

Թումանյանի հաջորդ գործը, որի հետ առնչվում է աշակերտը «Գելը»պատմվածքն է: Սա Թումանյանի ամենածավալուն պատմվածքն է, որը տպագրվել է «Հասկեր»-ում 1913 թվականին: Ինչպես և նախորդ գործը ՝ «Անխելք մարդը» գրելիս, այս դեպքում ևս Թումանյանը հսկայածավալ աշխատանք է կատարել Ռ Վարդանյանը «Թումանյանի պատմվածքները»(1977թ.) աշխատությունում նշում է, «Պատմվածքը գրելու նպատակով նա ուսումնասիրել է Չերկասովի, Թուսենիլի, Լազարևսկու, Բրեմի և այլոց գրքերը, մանկական ու կենդանական հանրագիտարաններ, կարդացել է սարկավագին ու Առաքել պատմագրին»:

Այսպիսի աշխատասիրություն և լրջությունը, պատասխանատվություն առ ընթերցողը, իսկապես զարմանալի է: Բայց առավել զարմանալին այն է, որ այդ հսկայական գիտական ու բանասիրական աշխատանքը դու չես տեսնում, այլ միանգամից ներգրավվում են պատմության մեջ, հայտնվում իրադարձությունների կենտրոնում, և ոչ մի ավելորդ բառ, ոչ մի ձևական խոսք, ամեն ինչ պարզ, անմիջական, մոտ և հարազատ: Մնում է երեխայի ձեռքից բռնած դարձյալ ուղեկցել Թումանյանի կախարդական աշխարհը:

Ընդհանրապես, Թումանյանի այս շարքի ստեղծագործությունները («Ծղրիդը», «Շունը») կարծես բնության հանրագիտարաններ լինեն: Երեխան շատ ավելին է սովորում այս պատմվածքներից, քան որևէ դասագրքից, որովհետև սովորում է հաճույքով, նրան հետաքրքիր է այն ինչ կատարվում է, մանավանդ պատմողն էլ Թումանյանն է, պարտադրված ոչինչ չկա, տարբեր դեպքեր, իրավիճակներ քեզ սովորեցնում են, և դու սովորում ես քո կամքից անկախ:

«Գելը» պատմվածքի այն հատվածը, որ կա դասագրքում (իսկ «Գելը» մի քանի փոքրիկ ու ամբողջական պատմվածքների միություն է, որոնցից յուրաքանչյուրը կարելի է առանձին տպագրել), ուսուցչից մեծ ջանք ու եռանդ է պահանջում, որպեսզի աշակերտը լիովին յուրացնի, ընկալի և վերարտադրի նյութը:

Եթե «Անխելք Մարդը» գրվածքի առումով պարզ էր, մի քանի բարբառային բառեր ու արտահայտություններ կային ապա «Գելը» այդ առումթվ բարդ է, հագեցած երեխաների համար անծանոթ բառերով և արտահայտություններով: Բարդ է մանավանդ քաղաքաբնակ, երևանաբնակ երեխաների համար բարբառը ընկալելու տեսակետից: Այո՛, բարդ է, բայց հետաքրքիր, երեխաները ծանոթանում են Լոռվա՝ մեր հայրենիքի մի չքնաղ կտորի բնությանը, բարբառին, վարքուբարքին, և այս ճանապարհով գնում դեպի ինքնաճանաչում, ինչը շատ կարևոր է ազգային ինքնագիտակցության հասնելու, որպես ազգ կատարելագործվելու, ինքնամաքրվելու ճանապարհին. ճանաչում ես քո երկրի բնությունը, ճանաչում ես քեզ շրջապատող աշխարհը, ճանաչում ես նաև քեզ «Ոմանք ազգային ձևը համարում են միայն լեզուն: Ինձ թվում է, որ արվեստի ազգային ձևը շատ

ավելի լայն հասկացություն է, քան լեզուն: Ազգային ձևի մեջ մտնում է ազգային պատմելաձևը, ազգային կոլորիտը, աշխարհազգացումը, հոգեբանությունը, և շատ պատկերներ ու դարձվածքներ: Որքան երկը հագեցած է լինում այս առանձնահատկություններով, այնքան նա հարազատ է դառնում Ժողովրդին և այնքան հետաքրքիր ու նոր՝ օտարների համար»

Ստ. Զորյան <<Իմ Թումանյանը>> 1969թ.

Ինչքան դիպուկ բնորոշում է մեծ գրող, Թումանյանի համերկրացի Ստեփան Զորյանի կողմից, և իմ կարծիքով սրանք այն նպատակներն են, որ ուսուցիչը պետք է դնի իր առջև:

Հիմա տեսնենք ինչ նպատակներ ենք դնում նյութը ուսուցանելիս և ինչ վերջնարդյունքներ ենք ակնկալում: Բնականաբար, յուրաքանչյուր ուսուցիչ յուրովի է մոտենում այս հարցին: Ինձ համար կարևոր նպատակներից է

ա) Բացատրել պատմվածքի ժանրային առանձնահատկությունները

բ) ծանոթանալ Լոռվա բնաշխարհին, ժամանակաշրջանին

դ) Օգնել գտնել կապը մարդու և բնության միջև

դ) խթանել լեզվաքերականական նյութի տեղին կիրառումը կապակցված խոսքի մեջ

ե) զարգացնել տեքստը հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերը ճանաչելու կարողություններ

զ) զարգացնել դեպքերը ճիշտ հաջորդականությամբ պատմելու կարողություններ

է) օգնել բառապաշարը հարստացնել հոմանիշ բառերով

Վերջնարդյունքում՝

ա) կիմանա՝ ինչ է պատմվածը

բ) կհամեմատի իր ապրած կամ ծանոթ միջավայրը պատմվածքում ներկայացվածի հետ, կհասկանա՝ որ ժամանակաշրջանի մասին է խոսքը

գ) պատմվածքից ստացած տեղեկությունը կմշակի, տվյալները կվերլուծի, եզրահանգումներ կանի

դ) կգնտի բարբառային բառերի գրական համարժեքները, սովորած բառերը ճիշտ կկիրառի խոսքում

ե) կվերլուծի պատմվածքը, բանավոր կվերաշարադրի, կառանձնացնի գլխավոր միտքը, բանալի բառերը

զ) կաշխատի բառարանով, կգնտնի հոմանիշներ, կզարգացնի բառապաշարը

Այս ամենը հիմնականում ծաղկաքաղ էր դասագրքի հեղինակներ Աշոտ Գալստյանի և Թամարա Թովմասյանի կազմած թեմատիկ պլանից, ինչը այսօրվա կրթական չափորոշիչներին համահունչ է և մեծ օգնություն ուսուցչին: Հեղինակները չեն զլացել նշել բազմաթիվ նպատակներ և վերջարդյունքեր, որոնցից ուսուցիչը կարող է ընտրել՝ ելնելով նաև դասարանի ընկալունակության աստիճանից:

Ինչպես վերոշարադրյալում արդեն նշել եմ ուսուցչի՝ նյութը կարդալուց է կախված, թե ինչպես կընկալի, կընդունի և կաշխատի աշակերտը, մանավանդ գաղտնիք չէ, որ աշակերտները ամեն ինչով սիրում են ընդօրինակել ուսուցչին: Կարևոր է, որ այդ պարզ, սրտաբաց զրույցի մեջ հայտնվեն նաև երեխաները՝ պատկերացնելով ձմեռնամուտի իրիկունը, քեռի Անդրեասի հյուրընկալ օջախը, իրենց՝ այդ օջախի շուրջը նստած հետաքրքիր պատմություն լսելիս:

Շատ կևևոր է բառերի, արտահայտությունների բացատրությունը, որովհետև չհասկացված բառը միտքը, քանդում է խոսքի գեղեցիկ շարվածքը, կիսատպատառության զգացում առաջացնում: Դիտարկենք բառերն ու արտահայտությունները՝

ծմակ, Մոտկորա ծմակ, թալա, Գիլի թալա, գիլի տուտ, ռեխ, գիլի բոլուկ, թվանք գցել, ապի, ղոչաղ կաց, ձեռաց կիտել բոցը ծուլ էլավ, քուքուրթ, զարզանդել, ձենը փորը գցել, ցցփորի ծառ բոթել, բլուլ, քիչ է մնում ծմակը կրակի, ուրախանաք, ինչ որ մենք ուրախացանք, գելխեղդ շուն, չոբանների ղըչըրղուն, էլ գելն ո՞վ կտա, էս բանը, ախպե՛ր, իմ գլուխը եկավ, կրակը մեզ ազատեց

Պարզ է, որ երեխաներին ուսուցչի, բառարանի օգնությունն է պետք, բայց նաև ես փորձում եմ երեխաներին սովորեցնել մտքից ելնելով գուշակել բառի կամ արտահայտության նշանակությունը: Ճիշտ է, երբեմն ծիծիաղելի պատահասխաններ են լինում, բայց դա նույնպես սովորեցնումէ մտածել, փնտրել, գտնել, սխալվել և գնալ առաջ ճիշտը, ճշմարիտը գտնելու:

Շատ կարեվոր է, որ երեխաները արտահայտիչ, ճիշտ կարդան դասանյութը, իրենք լսեն իրենց կարդացածը, հասկանան, այլապես մենք մեր նպատակներին երբևէ չենք հասնի:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել նրան, որ երեխաները կարողանան առանձնացնել հերոսներին նշելով նրանց արարքները և արարքների դրդապատճառները:

Եվ այսպես՝ Ստեփանը (ինը-տասը) տարեկան, հայրը, գայլերը, չոբանները, գելխեղդ շները, քեռի Անդրեասը: Հերոսների առանձնացումը ավելի հասկանալի, տեսանելի է դարձնում դեպքերի ընթացքը: Յուրաքանչյուր հերոսի համար գտնում և գրում են բնորոշ, բնութագրական բառեր ու արտահայտություններ՝ հիմնավորելով ասածը:

Այսպես «քանդում» ենք պատմվածքը, հետո մաս առ մաս սկսում «հավաքել»՝ արարք-դրդապատճառ քննարկելուն զուգահեռ խոսելով հերոսների ու մեր հույզերի, զգացողությունների մասին:

20-րդ դարասկզբի հայ գյուղի կյանքին ավելի լավ ծանոթացում չէր կարող լինել. (9-10 տարեկան) Ստեփանը հոր հետ սարի գոմերից հետ գալիս: Այս նախադասությունը պատմելով և մեկնաբանելով շատ բան կարելի է իմանալ գյուղի և գյուղական միջավայրի

մասին, երեխաներից ոմանք ծանոթ են նաև այսօրվա գյուղին, այնտեղ երեխաների կյանքին, ինչը համեմատելու, նոր գիտելիք ստանալու համար շատ կարևոր է:

Դասանյութը միջառարկայական կապերի համար լայն դռներ է բացում. բնագիտություն, կենսաբանություն, բանահյուսություն, նկարչություն, երաժշտություն:

Կարելի է անվերջ ծավալվել:

Ի վերջո, եթե երեխաները իրենք ցանկություն հայտնեն կարդալ «Գելը» պատմվածքի մյուս մասերը ևս և ամբողջացնեն գիտելիքները այդ հետաքրքիր կենդանու մասին, ուրեմն ուսուցիչը ինչ-որ չափով հասել է իր նապատակին: Պատմվածքին տրված դասաժամերը բավարար են նախատեսված աշխատանքները կատարելու համար: Բայց նորից ուզում եմ հիշեցնել, որ եթե երեխան չի կարողանում հասկանալով կարդալ, այս բոլորը կմնա լոկ իբրև բարի ցանկություն:

Ուրեմն աշխատանք, աշխատանք և աշխատանք մեր ազգային կերպը, ձևը պահելու և կատարելագործվելու համար, ուսուցման արդյունքը՝ գրագետ և կարողունակ անհատին, մարդուն այսպիսի ճանապարհով ուղղորդել դեպի համամարդկայինը:

Եզրակացություն

- «Անխելք մարդը» և «Գելը» գործերի ուսուցումը սովորեցնում է ավելի լավ հասկանալ ազգայինը, խոսել պարզ՝ օգտագործելով դարձվածքներ, պատկերավոր արտահայտություններ («Գելը» պետք է պատմել հանձնարարել որպես ականատես),
- Նպաստում է պետչափորոշիչներով ընդունված կարողունակությունների զարգացմանը (լեզվական և գրագիտության, սովորելու, ինքնաճանաչման, սոցիալական և այլն)
- Նպաստում է աշխարհայացքի լայնացմանը աշխարհաճանաչողությանը
- Նպաստում է բառապաշարի հարստացմանը

Առաջարկություն

- Հարցադրումների մեջ տեղ տալ միջառարկայական կապերին
- Ավելացնել ուղղագրական վարժությունները, որպեսզի նախորդ՝ 4-րդ դասարանում, և 5-րդ դասարանի անցածը ամրապնդվի
- QR կոդի միջոցով ծավալուն նյութեր չտալ (Ղ. Աղայան «Օձամանուկ և Արևհատ») դժվար է կարդալ:
- Շարունակել ընթերցել և ուսումնասիրել Թումանյանին՝ ազգային և համամարդկային Թումանյանին
- Չխուսափել (իհարկե չափի մեջ) փոքրիկ պատումներով ծանոթացնել Գյումրվա, Արցախի, Գավառի բարբառներին
- Միջին դպրոցի «Մայրենի» դասագիրք «վերադարձնել» «Ոսկի քաղաքը» և «Քաջ Նազար» հեքիաթները

Օգտագործված գրականության ցանկ

1. <<Մայրենի>> - 5 – Ա. Գալստյան, Թ, Թովմասյան 2023
2. <<Իմ Թումանյանը>> - Ստ. Զորյան 1969
3. Թումանյանի պատմվածքները – Ռ. Վարդանյան 1977
4. Թումանյանը և իր ժամանակը – Լ. Հախվերդյան 2000
5. Հուշեր և զրույցներ – Նվարդ Թումանյան 1987